RUMELS MANAGEMENT SOLUTIONS

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 1-ին եռամսյակ 2025 թ.

# Բովանդակություն


- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2025 թ. 1- ին եռամսյակում Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթը, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

# Զուտ շահույթ

- 2025թ. 1-եռամսյակի ընթացքում Հայաստանում գործող բոլոր բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է շուրջ **100,6 մլրդ ՀՀ դրամ**, ինչը **17,5 մլրդ ՀՀ դրամ** կամ **21%**-ով ավել է քան 2024 թվականի նույն ժամանակաշրջանում գրանցած արդյունքը:

- Ամենամեծ շահույթը արձանագրել է Արդշինբանկ-ը շուրջ **35,7 մլրդ ՀՀ դրամ:** Այս վերլուծության մեջ ներկայացված են «Արդշինբանկ» ՓԲԸ-ն համախմբված հաշվետվությունների տվյալները:

***Բանկերի զուտ շահույթը - 1-եռամսյակ 2025 / 1-եռամսյակ 2024 (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2025թ. 1-եռամսյակի ընթացքում աճել են շուրջ **260 մլրդ ՀՀ դրամով**, կամ **2,4%:**
- Առ 31.03.2025, ընդհանուր ակտիվները կազմել են **11.275 մլրդ ՀՀ դրամ:**

***Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.03.25 և 31.12.24 (մլն ՀՀ դրամ)***



## Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի (*Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, ԱՄԻՈ ԲԱՆԿ, և Ինեկոբանկ*) ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **60,3%:**
- Ամենախոշոր **3** բանկերի (*Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ*) ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **45,3%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **20,5%:**

***Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.25***



# Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2025թ. 1-եռամսյակի ընթացքում աճել է **4,1%**-ով:
- Առ 31.03.2025 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **6,533 մլրդ. ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **58%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

***Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 1-ին եռամսյակ 2025թ. (մլն ՀՀ դրամ)***



## Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի *(*Ամերիաբանկ, Արդշինբանկ ԱԿԲԱ ԲԱՆԿ, *ԱՄԻՈ ԲԱՆԿ,* եւ Ինեկոբանկ*)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **64%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի *(*Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ *ԱԿԲԱ ԲԱՆԿ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **49,1%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **20,3%:**

***Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.25***



# Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2025թ. 1-եռամսյակի ընթացքում աճել են **137 մլրդ ՀՀ դրամով,** կամ **1,5 %:**

- Առ 31.03.2025, ընդհանուր պարտավորությունները կազմել են **9.377 մլրդ ՀՀ**:



# Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2025թ. 1-եռամսյակի ընթացքում նվազել են **17 մլրդ ՀՀ դրամով,** կամ **0,3%:**
- Առ 31.03.2025, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **6,413 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **68%:**

## Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ - 31.03.25 և 31.12.24 (մլն ՀՀ դրամ)



# Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը նվազել է 2025թ. 1-եռամսյակի ընթացքում **56 մլրդ ՀՀ դրամով,** կամ **11%-ով** և կազմել է առ 31.03.2025 շուրջ **452 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13-ը**:

***Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.03.25 և 31.12.24 (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր կապիտալ

- 2025թ. 1-եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **123 մլրդ ՀՀ դրամով**, կամ **6,9%** ու կազմել **1.899 մլրդ ՀՀ դրամ**:
- Այդ աճը հիմնականում պայմանավորված է՝
- 1. Զուտ շահույթով – **100,6 մլրդ ՀՀ դրամ և**
- **2.** ԱՄԻՈ ԲԱՆԿ-ի կանոնադրական կապիտալի աճով– **20 մլրդ ՀՀ դրամ**

***Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 31.03.25 և 31.12.24 (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր կապիտալ

- Առ 31.03.2025թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **46%**-ը և հավասար է **865 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.03.2025թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **52%**-ը և հավասար է **989 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 31.03.2025թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **2%**-ը և հավասար են **44 մլրդ ՀՀ դրամ:**

## Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.03.25



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

# *RUMELS Management Solutions*

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am